

Ընդունել են Բելառուսի ԳԱԱ նախագահության նախագահին

Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ ընդունել է Բելառուսի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նախագահ Միխայիլ Մյասնիկովիչին:



Մայիսի 17-ին Հայաստանի ու Բելառուսի գիտությունների ազգային ակադեմիաների միջև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր:

Ողջունելով հյուրին՝ նախագահ Սարգսյանն ասել է, որ հայ-բելառուսական գիտական կադերը լուրջ դասնություն ունեն. «Գիտական ոլորտում մեր երկու երկրների գիտությունների ակադեմիաների դեռևս խորհրդային արիներին հաջող համագործակցության մասին հիշում ենք բոլորս: ԽՍՀՄ փլուզումից հետո, ցավոք, այդ կադերը խզվեցին, սակայն հուսով եմ, որ այժմ մենք համագործակցության նոր սկիզբ ենք նախանշում», - ընդգծել է երկրի ղեկավարը:

Բելառուսի ԳԱԱ նախագահության նախագահ Մյասնիկովիչը նշել է, որ իր երկրում Հայաստանի, հայ ժողովրդի հանդեպ շատ ջերմ վերաբերմունք կա: «Մեր ժողովուրդների միջև նաև ընդհանրություններ կան՝ մենք ամեն ինչ ստեղծում ենք սեփական ինստիտուտով, սեփական ուժերով ու համար աշխատանքի ենք ներդրում»,- ասել է բելառուս գիտնականը:

Կողմերը մտքեր են փոխանակել երկու երկրներում գիտության զարգացման հեռանկարների մասին: Հայաստանի ու Բելառուսի ԳԱԱ ղեկավարները նշել են, որ ստորագրված փաստաթուղթը երկու երկրների գիտական քառանկյունների համար փոխգործակցության նոր հնարավորություններ է ստեղծում:

ՀՀ նախագահի մամլո գրասենյակ



Վարչապետ Տիգրան Սարգսյանը երեկ ընդունել է Բելառուսի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Միխայիլ Մյասնիկովիչի գլխավորած դասվիրակությանը: Հանդիպմանը ներկա էր նաև Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը:

Ողջունելով հյուրերին՝ գործադիր ղեկավարը նշել է, որ կառավարությունը դասրաս է օժանդակել երկու երկրների միջև գիտական համագործակցության խորացմանը:

Միխայիլ Մյասնիկովիչը գոհունակությամբ է խոսել Հայաստանի և Բելառուսի ակադեմիաների միջև համագործակցության ընթացքի մասին: Նա ներկայացրել է Բելառուսի ակադեմիայի գործունեությունը և գիտության զարգացման ուղղությամբ իրականացվող ֆադաբալականությունը:

Զննարկվել են փոխափոխակցության համագործակցության խորացման հեռանկարները: Առանձնակի ուշադրության են արժանացել դեղերի արտադրության, սեղեկատվական տեխնոլոգիաների, սիեգերական տեխնոլոգիաների և բիոտեխնոլոգիաների, միկրոէլեկտրոնիկայի և օդակայի ոլորտները: Փոխադարձաբար ընդգծվել է գիտության զարգացման մեջ նորարարության և գիտական նվաճումների կիրառման անհրաժեշտությունը: Այդ համատեղումն Տիգրան Սարգսյանը կարեւորել է բելառուսական փորձի կիրառումը Հայաստանում: